—«Ուրեմն առաջ ընկիր», ասացի ես։

Բրօն ընկաւ առաջ, պատվիրելով ինձ, որ շուտ շուտ յետ մտիկ անեմ, պատրաստ պահելով հրացանս։

Այնուհետև սկսվեց մի առջի արշաւանք։ Բրօն, այծեամի պէս, թէթև թռչում էր ժայռից ժայռ, կապկի նման մագլցում էր լաւաների կտորների վերայ։ Ես անտանելի դժուարութեամբ հետևում էի նորան, ինձ սաստիկ նեղում էր հրացանս, որ ստիպուած էի պատրաստ ձեռումս պահել. միայն հետամուտ վտանգը այժ էր տալիս ինձ։ Ինչ զարմանալի տեղերից անցկացանք մենք, դա ոչ թէ մի քարքարոտ, այլ մի քարէ անտառ էր։ Ամեն մի քայլափոխիս Բրօն ծածկվում էր աչքիցս. ամեն յաջորդ քայլափոխին ես տեսնում էի Բրօին, որ մի ժայռի ծայրից ներքև էր սողում։ Իմ եղունգներս բոլորը փշրված և մատներս արիւնոտած էին։ Չգիտեմ որչափ տևեց այդ արջային արշաւանքը, երբ Բրօն յանկարծ կանգնեց։

«Ի՞նչ կայ Բրօ»։

—«Մենք այլևս առաջ չենք կարող գնալ. մենք գտնվում ենք մի զահավիժի ծայրում, որը կտրում է մեր ճանապարհը ամեն կողմից»։ Դա Մասիսի անթիւ վիհերից մէկն էր, որ լաւային հոսանքները ստեղծել են։

«Ցետ դառնանք և մի այլ անցք փնտռենք», ասացի ես։